

ՊԱՏՄԱՆՔ

Երիզան 15 օրը անգամ մը կը
հրատարակուի :
Տարեկան գինն է 10 ֆրանք
Մէկ թերթը 2 դուրուշ .
Բաժանորդագրուելնք տար-
ւոյն սկիզբէն է .
Դուրս երթալիքներուն ծամբու
ծախքը առնուլին վրայ է :
Անկեալ նամակը կը մերժու-
նայ :
Հանդիսիս վերաբերեալ նա-
մակ կամ գրութիւն, պէտք է
ուղղել առ խմբագիր :



ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԷՐ

Կ. Պօլիս, Արամեան տպարան .
Ատաբաղար, Պ. Սալանդեան .
Տրապիզոն, Հ. Գ. Սարգեան .
Երեզա, Պ. Սիմօն Մ. Խաչա-
տուրեան .
Նիկովիդա, Ռուբէն Կ. Գու-
պասագալեան .
Զմիռնիա, Յ. Տէտէեան .
Կարին, Կ Պատ. Զաքարեան .
Վան, Պ. Գրիգոր Իսահան .
Հալէպ, Նիկ. Տ. Մարգարեան .
Ատանա, Մինաս Մկրտչեան .

Ե Ր Ի Զ Ա

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Երե կ'ուզես գիտնալ թէ աշխարհիս ազգաց մեջեմ հոն է ամենեկն լու-
սաւորեալն ու հաւուսը . հարցուր թէ հր ազգն աւելի ընթերցասէր է
կամ հր ազգն աւելի բուրք կը գործածէ :

Թիւ 3 Փետրվար 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— Սահմանադրութիւն . — Հայ գաղթական . — Առողջական .
— Հայկական նամականի :

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Երբ՝ ժողով մը կը գումարուի՝ անշուշտ բարի նը-
պատակ մը ունի , ասանկ ալ մեր Ազգային Ընդ-
հանուր ժողովը , որ Ազգային երևելի և ուշիմ ան-
ձերու խումբ մը՝ Ս. Պատրիարքի նախագահու-
թեամբ գրեթէ 500 տարիէ ի վեր պատկառելի ա-
տեան մը կը բացուի : Ատեան մը՝ որ բոլոր Հայու-
թեան ականարկը կը գրաւէ . խումբ մը որ բովան-
դակ Ազգի մը անգործութիւնն ու բարեխառնութիւնը
պսոնցմէ կախում ունի : Ով կարող է ուրանալ .
ախշուշտ ասոնք են Ազգին բարեկամներն ու խնա-
մակալները , որ ամէն Հայ սրտերու հաճութեամբը

նոյն սրբազան և պատկառելի անտեանը կը ներկա-
յացնեն , որչափ որ փոքր մաս մը կը կազմեն այն-
չափ ալ ձայներնին բարձր և լսելի է ամենեցուն .
լեզունին պատգամ մի է , ականարկնին հրաման մը ,
ժողովատեղին Պատրիարքարան մը , և գործերնին
Ազգին վերաբերեալ որ և իցէ խնդիրներ , լուծելու
ու վաւերացնելու : Ազգին օգտին համար աղէկն
ընտրելու և վնասակարը մերժելու : Օգոստոսիառ
Սուլթանէն Ազգին տրուած իշխանութիւն մը որ Ազ-
գըն ալ միաբերան վերոյիշեալ պատկառելի և գե-
րագոյն ժողովոյ բարձրաստիճան անդամոց յանձ-
նած ու զանոնք իբրև Ազգին պաշտօնեայ ճանչցած
է : Ահաւասիկ այս պայմանաւ է որ զանոնք Հայ-
կական լայնածաւալ լատր հողմոց եւ ալեաց ձեռ-
քը չը մատնելու համար անոր ղէկը ձեռքերնին
բռնած են : Անուրանալի է որ այս խումբը Հայկա-
կան լատր ղէկաւարներն են . և զայն ուժգին
ժայռերու ղէմ չխորտակելու համար ուղղեցոյցի մը
կը կարօտէին , որ առանց ասոր՝ անկարելի կերե-

ւար իւր սահմանին մէջ անմիա յառաջանալու : Եւ ահա 1860 ին Ազգը իւր այս պակասութիւնը ճանչնալով Օգոստոսիս Ինքնակալին դիմեց , իւր անհաշտ և սևադէմ ճակատագրին տողերը անոր առաջ պարզելով Ազգին կրած անհամար թշուառութիւնները իմացուց , և ահա Նորին Կայսրութունն ալ քաջ ճանչնալով մեր այս կարօտութիւնը՝ իւր առատագութեամբ սրտէն դուրս Հայրենեան ուղղեցոյց մը շնորհեց , որնոր Ազգն ալ Սահմանադրութիւն (Քօնսթիթյւսիօն) անունը յատկացնելով յիշեալ խմբին յանձնեց որպէս զի Ազգային վերաբերեալ որ և իցէ խնդիրք անոր տրամադրութեան համաձայն վաւերանան : — Սակայն . . . հազիւ Թ Հայկական լաստը կարող եղաւ քանի մը վայրկեան երեքայ ծովուն վրայ , և ահա Թշուառոյն ու չար նախանձաւորին զօրակային հառաջանքները ուժգին հողմերու հետ խառնուելով եկաւ հասաւ՝ ու Հայկական լաստին մօտենալով ~~անոր սահմանները~~ կտարեց , ու այս վերջին վայրկեաններու մէջ ալ ահագին հարուածով մը զայն ծովեզերեալ ժայռի մը դէմ խորտակեց . և ահա բաւական ժամանակէ ի վեր է որ Արքունի նաւարանին մէջ նորոգութիւն ու նոր ոգի և նոր կենդանութիւն մը առնելու համար կը ծփայ . իսկ հիմայ ալ դեռ նորոգ կենդանութեամբ Պատրիարքարան չհասած տեսակ տեսակ ղէկավարներու պատգամներ կը տեղայ ժողովուրդին վրայ . ոչ լաստ կայ , և ոչ ուղղեցոյց , ալ միմիայն օղի վրայ առեալն մը կը քացուի , ու յնչկարծ Ազգային տուրքի անճշտութեամբ խնդիր մը մէջ կը նետուի . ամէն զրոյսէ ձայն մը՝ և ամէն ձեռքէ հարուած մը կը տեղայ , Սահմանադրութեան տրամադրութենէն դուրս՝ միանգամայն երեսփոխանաց Թիւր նուազ . բնիկ պոչսեցւոյն և ոչ մէկ տղարք մը չորոշուած նախ և առաջ գաւառացիական Ազգային տուրքը կսկսի վճարելու , զարմանալի տեսարան , և ուխտադրութեամբ Պատրիարքարան :

Սակայն ինչպիսի վճիռ . և որպիսի առաջարկութիւն որ երեսայի մը օրորոցի նման քիչ մը ժամանակ ասողին անդին գրուելով այսօր վարագուրի մը տակ կաներևութեամբ , ողջախոհ Հայր այս խնդ-

րոյն վերջին որոշմանը ակնգէտ կը դիտէ . իսկ շրջամիտին՝ ամենեւին հոգը անգամ չէ . ողջամիտ հասարակութիւնը օրէ օր Ազգին վերայ ծանրացած տգիտական կուսակցութիւնները , բաժանումները , երկարսռակութիւնները , անհոգութիւնները տեսնելով կը հառաչէ ու կը ցաւի . իսկ շրջամիտը՝ Ազգին թշուառ վէճակին վրայ երբեք աչք մը չնետեր , և իբր գերի մեծանուն կղերներու , և մեծամեծ էֆէնտիներու ձեռքի ու վերաբերի ներքի լոկի մնջիկ կը քնանայ . բոլոր յոյսը անոնց վրայ կը դիէ , կարծեալ որ այսպիսի փառասէրներու ձեռքը զիրենք ղէպ ի յառաջադիմութեան ապարէզ պիտի մըղէ :

Քանի տարիներէ ի վեր Ազգերնու մէջ մեծամեծ ընկերութիւններ կը կազմուին , ու մեծամեծ անդունդներով պատերու վրայ կուղծեր կը կախուին , ընկերական կեդրոն մը կորոշեն , մէկ քանի օր կերման կուգան , տեսակ տեսակ լրացիրներ , ձեռքերնին կառնեն ու կը կտրուին , սակայն՝ լոկի մնջիկ . վերջապէս կը ձանձրանան ու իսկոյն զանի մէկ կողմ դնելով քաղաքին տախտակին առաջը կանցնին կը խաղան ու կը քսոնուն , կերպին ու կը պարեն . զի շերը վրայ կը հասնի , սակայն ամենեւին չեն իմանար , վասն զի այնչափ քաղաքին մեծ անկիւնները կը թափառին , որպէս զի կարենան Ազգային և ընկերական շահը անկէ դուրս քաշել . . . ընկերակցք կը ձանձրանան՝ նախագահին ու ատենադպրին հոգին բերանը կուգայ , միայնութեան մէջ սրտերնին կը նետանայ՝ վերջապէս տեսնելով ընկերներէն մէկը իրենց բովը չիզար , ինքն ալ իսկոյն կեղնէ ու կը կըրծայ , և ահա միւս շաբթու կը լսուի որ այս ինչ անուն ընկերութեան չիտեմեան սիւնը կործանէր , և ընկերք ալ քաղիս անդին ցիր քու ցան եղեր են : — Անշուշտ , վասն զի Հայուն ընկերութեամբ մէջ կ'անցնած սիւնը արդէն ծած ու ծածկած է , իրան է որ քիչ օրուան մէջ պիտի կործանուի : Անտարակոյս ընկերացաւէր Հայր այս կէտին չիտն կանգ առնելով ինչի պիտի հարցունէ թէ՛ ինչու : — Այո , վասն զի Հայը՝ դեռ տղայամիտ է . միայն մեծութիւն , շքեղութիւն և փառք կերակրէ : Այո , վասն զի


Հայոցմէ շատերը գեռ շլամիտ, տգէտ սնուցարժեք և անհոգ են: Այո, վառն գի Հայոցմէ շատ ծերեր ի բնէ և միշտ ի վառն պատէ կը գոչեն, «ինչպէս որ տեւանք այնպէս կերմանք, կարգն ինչ է, կանոնն ինչ է»:

Այո հայոցմէ շատ երիտասարդ պարոններն ալ՝ ֆեսերնին ծուած, փխակիւնին երկնցուցած. որ մէկը ակնոցով, որ մէկը պատուածով, սրճարաններու, փողոցներու, պարտէզներու, զինետուններու, անկիւնները կը շրջին, և գեթ օրիորդի մը աչքին զեղեցիկ երևնալու համար ինչ ընենին չգիտեն:

Հայը շրեղ և հռչակաւոր անունը՝ այսինքն Պէյ-ուծինը ու Էֆէնտիուծինը կը սիրէ, Պատրիարքարանի և թաղականներու անդամ կոչուելը կերպով, զավաթն իր անուան պէս շրեղ հռչակաւոր և սզոգօգուտ գործ տկանել չգիտէ. Հայը ուտել, խմել, մեծանուն ապրիլ, բարուկիր տուններու մէջ բնակիլ, սենեակներ զարդարել, զոյգ զոյգ կրակարաններ վառել գիտէ. սակայն որքերու, տնակներու, զպրոցներու, ընկերութիւններու, բարեկարգութիւններու և Հիւանդանոցի օգնութիւն մը մատակարարելու ջանքը չգիտէ, Հայը ձիերու կառքերու վրայ երեւոյլը կը սիրէ, սակայն մամուլի տակ կանգնող Հայուն ի սէր Ազգի մթաւած թղթերու վրայ աչք մը երեքցնելու համար ստակ վճարելը չգիտէ: Շքեղութեան ու փառաց համար զանազան ջորի պէս առուակներէ դուրս կը վազցունէ. սակայն իւր մտադրական և բարոյական հորիզոնը նստահոյսելու, ու Հայ զրակաւորութիւնը պատուելու համար, փորձիկ ծախք մը ընելու կը տրոնջայ, Հայը ընծեր-ցանքութիւնը կը սիրէ, սակայն զրբի կամ լրագրի մը ստակ տալու կը ցաւի. . . վերջապէս Հայը իւր Ազգական պարտաւորութիւնները չճանչնալով Հայկական սահմանէն դուրս դէպի օտարին, այսինքն Եւրոպացւոյն սահմանին վրայ անկիւն մը գտնելու համար ասդիս անդին կը քաւի. . . սակայն որչափ տարբեր է Հայը Եւրոպացիէն: Հայկական մշտաւորական հորիզոնի վրայ կախուած կանթեղին մէջ խաւարի ու տգիտական պատրոյի մը կը ծփայ. սակայն Եւրոպացւոյն մշտաւորական հորիզոնի վրայ

շքեղագարդ և փայլուն ջահ մը կը վառի: Ամօթ Հայուն որ այս շքեղութիւնը չունի:

Ուրեմն ինչպէս չ'ցաւիր ճշմարտասէր և ողջախոհին Հայկական սիրտը. երբ իւր Ազգին այս աղէթնալի զինակին վրայ փոքրիկ ակնարկ մը նետելու ըլլայ, և ինչպէս կուրախանայ խաւարասէրը երբ այսպիսի Հայութիւն մը կը նշմարուի, մին և որպիսի բերկրունք մը չգար յետադիմութեան բարեկամն, ու յառաջադիմութեան թշնամի՝ վեղարը, երբ զանոնք բռնութեան շղթաներու առաջ կաշկանդելու համար, յարմար առիթ մը կոչենայ:



ՀԱՅ ԳՆԱԹԱԿԱՆ

Ով է Հայը, միթէ նա է, որ խօսում է Հայ լեզուով, ևէ կամ որի մականունը յանգում է «եան» մասնիկով: Որ ուսում է ամէն օր ճաշին տօլա ու փլա, Կամ պարծախօք միշտ հապնում է Հայի գրակ ու հալա:

Ով է Հայը, միթէ նա է, որ գնում է Հայի ծամ. Ու արեւը հաղորդվում է, խիստ սակաւ ից չորս անգամ, Որ կեանքումը պասչէ կեքել, ծոմ է պահում է նոյնպէս, Յօրանջելիս Խաչ է կնկում, բաց բերանն ու երես:

Ով է Հայը, միթէ նա է, որ տեսնելիս տեսէրին, «Օրհնեա ի տէր» պատրաս ունի ամէն բոլէ իր բերնին, Որի համար մեծ ամօք է, նաեւ մեղ է մահացու. Թէ Զաւիկի բաքախմանը չուէ սէր խաւ կարմիր ձու:

Ձէ սիրելիս Ազգութիւնը, չէ արտաքին արարմունք,
Հայ ծնելոյ անգամ չի տար քեզի Հայութեան իրաւունք.
«Ով» է կամ «եան» մտկանունիդ վերջին վանկին
Կարմիր ծուղիկ կամ քէ անձու կայսարութեան Զարկերը
Բալլա փաշա կամ սուրհ է ամէն օրուայ կերածդ,
Սեպուկ պալլօ, կամ քէ չուխայ է վրայի հագածդ,
Ողջը վին է ծեսով չեն տալ, Ազգիդ վնաս կամ օգուտ,
Տեղը մնայ Ազգութիւնը, այդ նաեւ վարժ չէ հոգուդ:

Թէ դու Հայ ես, Հայութիւնդ պիտի յարգես անպատեհաւ,
նաւ,

Հայաստանը պիտի լինի, յուսոյ աստղ քեզ համար,
Օտարինը դու մի ասել, մի էլ սիրել կուրօրէն.
Բայց քու Հայի օգուտները, միտք վեր դասէ ամենէն:

Արուեստ ուսում, շեղ արուեստ տարածէ Հայ Ազգի մէջ.
Բայց բռնութեամբ միտք հեռացուր, նորա մէջէն կրօնի վէճ.

Թող սիրելի այդ խնդիրը: աչնդ դարձուր տես մտա,
Բիւր բիւր հոգիք դու կատեսնէ կորած սէր պատճառ.
Բայց մինչ այսօր այդ խնդիրը մնացեալ է անվերջ.
Թող խելովդ աշխատում ես, քակել անհալ այդ կենիւ:

Սիրէ Ազգդ, ոչ լոկ խօսով, Սիրէ ինչպէս քու անձը,
Անոր օգտին քէ պէտք լինի, զոհէ բաղդը քու գանձը.
Մի խնայել կեանքդ անգամ, արիւնդ բիւր նրան զոհ.
Ոչ՝ այն յուսով որ քու Ազգդ իսկոյն լինի քեզի գոհ:

Իսպախ սերը չէ պահանջում ամենեւին տրտման,
Թէ տուածը չ'ես առնուի, դորան կասեն առուեստը,
Բայց վախ միտք որ անգգայ ես իւր Ազգի վիճակին,
Հազար անգամ քեզի վերայ, երեսն քան պէտք աստակին:

Թէ դու Հայ ես՝ գիտես արդեօք, ի՞նչ է Ազգիդ նախա-
հայր,

Որ՞ տեղ մը կ'զով նա ընտել էր Ազգին համար Հայ
աշխարհ,

Բանի տարի անկախ մնաց, Հայր օտար ազգերից.

Բնի՞ քու պատճառ, որ նա ընկաւ իւր առաջում վնաս-
ման զոհեալ ծովի մէջ, ինչպէս զոհեալ ծովի մէջ:

Ուր՞ ցրուեցաւ քո խեղճ Հայր Դուին այժմ օգնական.
Կայ մի հնար՝ միշտ քեզ կամ յարս նրա կրկին նստոգման:
Թէ կայ հնար այսու պատճառ ես անձդ Ազգիդ զոհ
անել,

Խիտ կոթարանք, սաստիկ տանջանք, սով եւ ծարաւ
միտք տանել:

Դու պատճառ ես կայդ քողմել, ծնողք, եղբարք,
սիրական,

Սիրելւոյդ տեղ կուծիդ սեղմել միտք մահառիկ քրտանք,
Դու պատճառ ես, միտք դէմ երթալ վեղարներէ սրի դէմ.
Սարսափելի մահդ տեսնել, դու կարող ես ծաղրադէմ:

Միդ ժամանակ քեզ Հայ կասեմ:

Բայց քէ փորդ տոմարներից քու փառքից տրտալի.
Հաւատալիք ունեւորդ օգուտ քեզի չես Հայի:

ԲԱՄԱՐ ԿԵՍԱՐԻՅ

ԱՌՈՂՋԱԿԱՆ

Մարդկային ամուսնական կենաց վրայ ընդհանուր
տեսլականութիւն.

(Մարիամ փրհօսէ) ՎԱՂԱՋԱՍ ԿԱՍ ԿԱՏԻԱՋԱՍ
ԱՄՊԻՍՏՈՒԹԻՒՆ: Տղայոց մեծերը կարող են զաւակ-
ներնին ամուսնացնել, դեռ անոնց բնական զգաց-
ման աճումը կատարեալ ձև մը չհղուած, վասն զի
երիտասարդ պատանիք, կատարի բաղձանքէն զրդ-
եալ՝ ինքզինքնին կը յոգնեցնեն ու կը ջղատուին՝ շատ
անգամ ձեռքով շոշափումներ ընելէ չղաղրելով:
Մրդարեւ ամուսնականի է այսպիսի կանխահաս մո-
լուծենէ յառաջ եկած տխուր արգանեաց մահաբեր
չարիքը՝ որք ամուսնական կենաց մէջ կնոջը մեր-
ձաւորութեան վայրկեանին պիտի զգան: Արդ՝ մա-
շտուածենէ յաջորդած սերմնական կորուստներէ վեր-
ջը՝ յանկարծ յազուածեան անսխտութիւնը նորա-
պսակ ամուսնանեցող վրայ ծագաւորելով այդ եւ կին
կսկսին իրարմէ տաղտկանալ ու ալ զիրեար չզըգ-
ուել. Թէպէտև իրենց այս զգայական ցանկութիւնը

ախնայեցեալ համար շատ ծանօթութիւններ կը փնտռեն, տակաւն անօգուտ և փութ անշխատանք :

Ուրեմն որչափ ցաւագին է այն երիտասարդ պատանին՝ որ տգիտութեամբ իւր հեշտական կրիցը կոյր գործիք մ'ըլլալով շատ անգամ լաւ ևս ըսենք, օրուան մը մէջ քանիցս անգամ այս մահահամ և թունաւոր երևակայութենէ գրգռեալ շոշափման վնասակար ընթացքը կը շարունակէ : Ու ծաղկապսակ կենաց թերերը վայրկեան մը առաջ գերեզմանական անդունդը խորասուզել կը փութայ :

Խօսքերնիս իզական սեռին վրայ դարձնելով կըրտանք ըսել որ օրիորդաց համար ԿԱՆԻԱԶԱՍ միաւորութիւնը աւելի վնասակար է : Եթէ ծնողք այսպիսի փափուկ կէտերը չնկատելով անխորհուրդ գտնուին աղջիկներն դարձապէս պատժապարտութեան մը մէջ ձգելէ զատ ուրիշ բարեկամութիւն մը ըրած չեն ըլլար անոնց, վասն զի կանխահաս ամուսնութեամբ դեռահաս օրիորդք չեն կրնար ստանալ այն ուժն ու գեղեցկութիւնը, ուր որ քիչ մը վերջը պիտի ստանային : Հասակն ու դէմքը կայլազունի, իր ծնողաբեր գործի մայր լեզուն (սա մարտիս) պէտք եղած տարածութիւնը չառած չկարենար արական սաղմոյն (իւն ֆօքթիս s'իւն սերթիւն վոյնիւն) այն ինչ տարածութիւն ունեցող գործին իւր մէջը բովանդակել և ոչ ալ կրնայ հասնիլ այն վախճանին զորս ամենակարեւորագէտ պէտք ունէր իւր անմանը կատարելութիւն մը տալու : Աղիքէն իր վար սահած յողակապ ոսկերաց տկաքութիւնը, լեռնամիջի տրամագրք ծին նուազութիւնն . ու ծննդաբեր նեղութիւնն միշտ վնասակար և մահացու պատճառներ են . մորմը ու իր պտղոյն, սակայն կը պատահի որ դեռահաս օրիորդի մը դեռ ծննդական գործարկները կատարեալ ձև մը չառած՝ կարող կըլլայ ողջ և առողջ զաւակ մը ծնել . այսպէս ալ ղոյզնագիւտ չէ տեսնել, կանխահաս միաւորութեան համաճարակ և յաղթու զոհն որ երկար ժամանակ նուազեալ կենօք և ցուալի վիճակու գետնաքաշ կընէ մարդս :

ԱՆԱԳԱԶԱՍ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ . (մարիամ քարտիկ) ինչպէս որ արական սեռի ծննդական գործիքները ինչուան իր կենաց քառապսակ և հիւսկերորդ տարին,

նոյնպէս ալ իզական սեռի կենաց երեսուն և հինգերորդ տարին յաջորդելուն պէս, իսկոյն իրենց երիտասարդական առոյգ կենդանութիւնը կը կորսնցունեն : Վասն զի այս տարիքներուն մէջ մարդկային կենդանի զգացման զօրութիւնը կսկսի վաճաճ կամաց դադրիլ ու նուազիլ : Եւ անա այս միջոցը, երկու սեռի կործանման դարագլուխը կը սեպուի : Գուցէ ընթերցողաց շատերը մեր այս գրածներու հաւատարմութիւն տալ չուզեն ըսելով թէ արդեօք կարելի է որ մարդկային զգացմունքը այսպիսի կանուխ վայրկեանի մէջ իւր օրհասականը կարդայ, սակայն երբ սա յետեւեալ մեկ քանի կետերը բացատրութեան ու դիտողութեան փոխուելով ըլլան այսինքն թէ որ մէկու մը բնական կազմութիւնը . բնական կենդանութիւնը, ուղիղ ընթացքն ու անկարգութիւնը և այլն... աչքերուն առաջը բերելու ըլլան անշուշտ պիտի համոզուինք ու զմեզ իրաւախօս պիտի դատեն : Այս անակնկալ միջոցիս մէջ մարդկային անդամոց զգացման կանգնումը առոյգ տարիներուն կարօղութիւնը չունենալէ զկնի, սերմնական զուտ և առատ հոսանիւծնալ իր ժայթքիչ ուժը չունի . եւ որչափ որ մարմինը կանգուն ալ մնայ . դարձեալ ջղայնոց զգացմունքը . ոչ յաճախ և ոչ ալ խրոխտ անորոշակ մը կզգայ . միմիայն երեւակայութիւն մ'ունի և ոչ թէ բնական ազդեցութիւն և կարելի է բոլորովին ունեցած արական յատկութիւնն ալ կորուսած է :

Բացառութիւններէ դուրս, կանանց մէջ ալ արական սեռի նման մի և նոյն երեւոյթը կը տեսնուի . բնական սէրը իր սրտին մէջ բորբոքելէ կը դադրի . միաւորութեան պիտոյնն ու սիրոյ բաղձանքը այլ ևս զինքը չզրգուէր, թէպէտ և երբեմն միաւորութեան փափաքը իր սրտին մէջ ծնունդ կառնէ, սակայն այս փափաքը անաղօտ կանգեղի մը լուսին տկար ցոլացման շառաւիղին կը նմանի, որ երբեմն կը լուսաւորի և իսկոյն խաւարելով՝ երեւակայական ստուերին տակ կ'աներևութանայ :

Ընդհանրապէս կանանց շատերը երեսուն և հինգ ու քառասուն տարեկան եղածնուն պէս կսկսին գիւրանալ, և այս գիւրութիւնը իր ծննդաբերական գոր-

ծոց բայքայմանը նշանն է : Այս տարիքները մէջ գտնուող կանայք չեն երպգեր միաւորութիւնը այնչափ՝ ահա որ քանի մը տարի առաջ գիշեր և ցերեկ սատուիկ կերտեցին : Եթէ երկիրին զիրենք զըզունօք անհոգ թնոյ մը մէջ թողելու ըլլան՝ վերջապէս մէկ խօսքով, այս անագանաւ տարիքներու մէջ ընդհանրապէս երկու նեռի ծննդական գործարանները իրենց քան և հինգ տարու առոյգ և մոլի եռանդը կորսնցունելով՝ միշտ մէկգմէկէ հեռի կը թախառին :

Այս բացատրութիւնս միտք առնելէ վերջը՝ ամենազիւրին է նշմարել թէ անագանաւ ամուսնութենէ յառաջ եկած պրոտիզ որչափ անառոյգ, որչափ տեղեկ և որչափ տկար ու անզօր եղած պիտի ըլլայ, քան զերիտասարդական առոյգ և միաւորութեան եռանդով տարիքներու մէջ ծնունդ առած երեխայէ մը : յիշուի անուրանալի կէտ մէկ ասիկայ, և փորձն ալ միշտ ընտանեկան ընկերութեանց մէջ յայտնի կերևի. երևելի և ուշիմ գիտողութեամբ պարզապէս կը տեսնենք որ ի՞նչ նանակակալ դէպքը շատ անգամ մեծամեծ քաղաքներու մէջ ծնող երկու սեռի ողորմելի արարածներու վրայ կը հասնի : Ուրիշ պատճառ մը չտեսնուիր այսպիսեաց կազմութեանը մէջ, այլ միմիայն ծնողաց ձերութեանն ու անագանաւ ամուսնութեան մը սոսկալի և դառնահամ արգասիքը :

Նառնանակի

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՆԱԿ

Էրիզա 18 Յունվար 1868.

Ազնիւ Էրիզա

Հայկական աշխարհի անկիւնները չըջող Հայոց սիրտը դարձեալ սկսաւ այս օրերուս մէջ անգարմանելի վէրքեր բացուիլ. Հայկական աշխարհի կոնանչագեղ եւ մանուշակագոյն դաշաբերու վրայ ծրող ծաղկող անբռնարար յամբիկներն : դարձեալ սկսան իրենց հը-

պարտ գլուխները գետին խոնարհեցնել. Հայրենեաց հողերու վրայ գորգուրացող Արեւ երեսն գեփեռը սկսաւ ալ մեզ չը բուրել. Արեւելեան աստիկը որ գէթ ժամանակէ մը ի վեր անապատ կանթեղի մէջ առաւելներու նման Հայրենի հողիցոնին վրայ կը փայլեր, ահա ալ վերջին օրերուս մէջ անդառնալի կերպիւ սկսաւ խաւարին խորեք խորասուզիլ, ո՞նիսնեաց շիրմերու անդունդներէ սկսաւ անիծից Հանթերու որոտմունքներ մեր վրայ տեղալ, տուն ճմաւ իս Հայերու սրտին մէջ՝ Երոտմութեան թանձր մառախոլ մը սկսաւ լալիւնաթիւ Հայեր սկսան այս երեսնային վրայ խորհիլ զո՞րքս են զեռնայն օրն իւր անիծելակալ չըջող չը կտտ բաժ. այս աղետալի փայլէտներուն հետ Սուրբ յառնասպառ լեռներու վրայէ վ զարի մը դրամամբ, Հայկական քաղցրիկ գեփեռը դառնաշունչ քաղցրիկութեամբ իստանալից նշմարեց ու ու Միքայէլ Նալբանդեանի պէս արդարասիր եւ Աղատութեան նահատակի կեղեանի սնունդը իր թէ ապագայու սեւ տառերով թռչող մը վայ գծուած տեսնուեցաւ. իսկ ես՝ որ այս վեղարաւորին վատարտութիւնը՝ դրեթէ տարի մը առաջ Միհմուտ անուն յորդրին մէջ տեսած եւ կարգացած էի. եւ բուն իսկ զինքը տեսած ու ահոր սեւադէմ սրտին մահը յոր չեմք դառն ըլլաք Հասկցած էի, բնաւ երբեք հոգս չեմք վասն զի վեղարը որչափ որ Աղատութեան նահատակը վտարաններ, այնչափ ալ անոր ստղանդն ու Հայրենասէր եղանդը հոն բուրանող կը փայլեր :

Մրդարեւ բարեկամ մէջ յիշեալ նամակագրին կամ լուսն է ըսել չարասիրտ վեղարաւորին վատարտանութեանցը վայ չենք ցաւիր, վասնզի շատ փորձերով, հասկցուած է որ պրդարութիւնը ճմարտութիւնը իրաւունքն ու ազգասիրտ թիւնը միշտ վեղարներու տակ փակեալ կը մնայ. եւ ասոր պատճառն ալ բնական զիտութեան էջերը թղթատող մէկը կրնայ քաջ կռուել. վասն զի ինչպէս որ փակեալ տեղաց մը մէջ՝ մարդոց շունչէն օդը կապականի. ահա տակն ինչպէս ալ ճմարտութիւնը վեղարի մը տակ իսկոյն կապականի. ինչպէս որ ապականեալ օդոյն մէջ գտնուող մէկը յանկուրդ կը թալկանայ (սալիսի) նոյն-

պէս ալ վեղարաւորի մը կոյր գործիք եղող Հայր անոր գլխուն մահարոյր շողին ծծելով անկէ՝ դան գլխակի մը կ'ըստարանքը կ'ուռնու, աւ կենդանաշունչ ար... ծոց սահմանէն դուրս աքորեալ՝ մարդակեր գլխակի մը խորը կը գահավիժի:

Արդարեւ բարեկամ, կցտիմ, եւ վստ կգոչումարն ուսումով Հայուն՝ որ այնպիսի ապիտան վեղարի մը փառամուլութեանն ու շահասիրութեանն իր կոյր գործիք ու անոր չարագրգռ ձեռքի սջակից գտնուելով, իր սրտին մէջ պղպաղող Հայկակ սն կա՛ն երին յոյսը ապականեալ վեղարի մը տակ փակեալ՝ օղոյի մէջ կը մղէ, խկոյն զայն մարեւո չամար. արդեօք ինչ կը յուսայ յիշեալ վատարան վեղարաւորն ու միջոյարեան սեւ սիր՝ Հայր, որ Նիքայեւ Նալբանդեան Հայրենասէր Նահատակի մը վրոյ այս տի գաւառանութիւններ կը յաւելու. այն որ ճ մարտութիւնը խոտովանելու համար բռնատրի մը ձեռամբ բռնաարկուած, եւ վերջապէս անմեղ դստանտան մը վատակելով ազատօրէն մնած. ու բաղմաթիւ ողբախոհ Հայերու ներկայութեամբ եւ քեզ հանդիսիւ եկ ղեցւոյ մը բալը թաղուած է. զաւարանէ ուրեմն այսուհետեւ որչափ որ կուգես, ո՛վ դու Վատս կայ թո՞ւ. սակայն քաջ գիտցիր որ ծածկաստանի ազատ էրկրի մը օղը ծծող Հայք ձեզի պէս չեն, կը ճանչնան Նալբանդեանն ու իր ասպնդը, կը սիրեն զիւրեքը, եւ իր անունը անահագնեւուն համար ինչ ազնւոտութեան վերնագրով նողկելը օրը իրը անգամ կը կրէնէն լսելով:



ԱԶԱՏԱՌՈՒԹԻՒՆ

Ազաւ Ասուածն այն օրից,
Երբ հանեցաւ շունչ փչել.
Իմ հողանիւք շինուածին.
Կենդանութիւն պարգեւել,

Եւ անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարգեցի,
Եւ իմ անգօր քեւեռով.

Ազաւութիւն գրկեցի:

Մինչ գիշեր անհանգիստ,

Օրորացում կապկապած.

Հայիս էի անդադար.

Մօրս՝ Բուր խանութաւ.

Խնորում էի մորակից.

Բազմակնեւ արծակել.

Եւ այն օրից ուխտեցի,

« Ազաւութիւն սիրել:

Թորով լեզուիս մինչ կապեր,

Արծակեւեցան բացուկսն:

Մինչ ճնողքս իմ ծայրին,

Խնդալիս ու բերեցան.

Նախկին խօսքն որ աւացի,

Զեր հայր կամ մայր. կամ այլ ինչ.

« Ազաւութիւն դուրս բուր.

Իմ մանկական բերանից:

« Ազաւութիւն ինձ կրկնեց,

Ճակասագիրն վերելից.

Ազաւութեան դու գինուր,

Կամիս գրուիլ այս օրից.

Ո՛հ փռոտ ճանապարհի,

Քեզ շաւ փորձանք կապաւէ.

Ազաւութիւն սիրողին,

Այս աշխարհը խիստ կեղ է:

Ազաւութիւն գոչեցի,

Թող որոտայ իմ գլխին.

Փայլակ կայծակ հուր երկաթ.

Թող դաւ դնէ քեւամին.

Եւ մինչ իման կախարան,

Մինչեւ մահու անարգ սիւն.

Պիտի գոռամ պիտի կրկնեմ,

Անդադար ազաւութիւն:

ՄԻԲԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Ուստի կը խնդրեմ Գ) խմբագիր որ ձեր պատուական Հանդէսին մէկ անկիւնը ներկայիս տեղի չնորհել բարեհաճիք. իբր արձագանք յիշեալ վեղարին եւ անոր չարագրգիռ մեքենայական գործիք մ'եղող ըստրուկներու՝ հայկական սիրոյ դեմ՝ գրած վատարանիչ յօդուածին եւ իբր անոնց բռնած այնպիսի անխոհեմ ընթացքնուն համար, յուսալով որ երբ վատարանիչք իմանան իրենց կարծեաց ու յուսացածին հակառակ հասարակութեան պատճառած զգուանքն ու ձանձոյթը թերեւս այս ընթացքներն փոխեն եւ այն ատեն Ազգն ալ անոնց գրածներէն քան մը հասկնալով գուցէ օգուտ մը կարենայ քաղել ու շահածել. եթէ ոչ Հայութեան ասպարէզի մէջ ունեցած սակաւ ինչ համարումին ու կարեւորութիւննին բողբոջին կորուսած պիտի ըլլան; եւ Հայոց պատմութեան մէջ Վասակայ զաւակ կոչուելէ զկնի, յաւիտենականութեան արդար դատաստանին առաջ ալ ճակատնուն փրայ իբր Ազգատեաց մէյ մէկ նշան պիտի դրո՞մուին:

Բարեկարգ

ՎԱՀԷ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՏԱՄՍԱԲՈՅԺՆ

ԱՐԵԻԵԼԵԱՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԳԱՍԱՌՆ

Ի ՇԻՆԳ ԱՐԱՐՍ

Ի Յ. Յ. ՊԱՐՈՆԵՍՆԷ

Այս վերնագրով Արամեան տպարանէ մաքուր տպագրութեամբ եւ գեղեցիկ տառերով իւրոյս ընծայեալ արդի երիտասարդաց հետաքրքրական զուարճական երգախառն եւ կատակերգիչ 128 երեսէ բաղկացեալ տետրակ մ'է որ կը ծախուի հետեւեալ գրատունները գին 8 ղշ:

Ի Մերձան, Մարգարեանի գրատունը,
Ի Չաքմաբճըլար, Գաֆաֆեանի գրատունը,

Ի Շերիֆ փաշա խան, Փարիզի, գրատունը,
Ի Պաշլըքճի խան, Գէորգի,
Ի Հալըճը օղլու, հաճի Օհաննէսի սրճարանը,

Ս. ՊՕՂՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

ՁԱՆԳԱՆԱՋԱՐԸ

ՅԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ Ի ՄԻ ԱՌԱՋԱԲԱՏ

ԲԱՐՍԱՆԵԱՑ

ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱԼԷՍԵԱՆ

Այս անունով Միհէնտիսեան տպարանէն իւրոյս ընծայուած 124 երեսէ բաղկացեալ գաղիական բնագրէն թարգմանուած թատերական փապպնութիւն մ'է, որ կը գտնուի բոլոր Հայազգի գրատունները, գին կէս արծաթ մէճիւտ:

Ա. Զ. Դ.

Այսօր պարտ անձին համարելով կը ծանուցանեմք Հայ գրականութիւնը պատուող եւ անոր յառաջադիմութեանը փառաբող Մեծաբոյ ազգայնոց, որք բարեհաճին Հանդիսիս յարտեւութեանը համար, ունեցած պարտքերնին վճարելով զմեզ երախտապարտ ընելու ջանասէր գրտնուի:

Ձենք դանդաղիւ նաեւ խօսքերնիս երկրորդելու Հայ գրականութիւնը չպատուող Մեծարգոյ ազգայնոց, որք բարեհաճին իրենց ուղղուած թերթերնիս առաջին թիւէն սկսեալ վայրկեան մը առաջ կրկին ետ դարձունելու պատիւը մեզ չ'զլանալ:

Խմբագիր-Տնօրէն

ԽԱՉԻԿ ԹԻՐԶԵԱՆ

Առակներ առ, բժշկական դպրոց

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԷԱՆ

Կ. պօլիս, Ուղուն Չաքմաբճի փաշա խան, քիւ 13